

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԵՐԱԿՈՒՄՆԵՐ

Ի. Ռ. Սաֆրազբեկյան

ՀԱՊՈՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Հովհ. Թումանյանի ստեղծագործության մեջ թարգմանությունները նշանակալից տեղ են գրավում: Մեծ բանաստեղծը միշտ էլ ջերմ հետաքրքրություն է ցուցաբերել մեծ ու փոքր ժողովուրդների գրականության և բանահյուսության նկատմամբ: Նրա թարգմանությունները խիստ բազմաժանր են՝ բանաստեղծություն, արձակ, էպոս ու հեքիաթ:

Հ. Թումանյանը սիրում ու բարձր էր գնահատում ժողովրդական հեքիաթները, քանի որ նրանցում բացահայտվում են ժողովրդի նվիրական զգացմունքները, երևան բերվում արատը, պատժվում մեղավորները, ծաղրվում ընչաքաղց և հիմար մարդիկ: Ժողովուրդը հեքիաթի մեջ դրսևորում է իր ակտիվ վերաբերմունքը, ընդհանրացնում իր դարավոր կենսափորձը: «Ժողովուրդները ոչ մի բանի մեջ էնքան պարզ ու պայծառ չեն երևում, ինչքան իրենց ազգային էպոսի մեջ», — գրում է Թումանյանը: Այդ նույնը կարող ենք ասել նաև հեքիաթի մասին:

Հ. Թումանյանը ոչ միայն սիրել է հեքիաթները, այլև ջանասիրաբար է այն հավաքել: Հայտնի է, որ նա գրի է առել «Հազարան բլբուլի» մոտ 60 տարբերակ:

Նա շատ բարձր է գնահատել բանասացների, որպես ժողովրդական գանձերի, ժողովրդական ստեղծագործությունների պահպանողների. «...Հեքիաթները, լեգենդները, առակները, երգերը, անեկդոտները թափառում են գավառից գավառ, երկրից երկիր, լեզվից լեզու, ազատ, անպասպորտ»¹:

Թումանյանը այն կարծիքին էր, որ ամեն գրող իրավունք ունի օգտվելու ժողովրդական ստեղծագործության բազմահարուստ գանձարանից, բայց ամբողջ իմաստությունն այն է, թե ինչը թողնել հեքիաթում և ինչը դուրս գցել, կատարյալ լեզվով ու ոճով հաղորդել ժողովրդական հեքիաթի ամբողջ յուրօրինակությունը, պահպանել նրա գեղեցկությունն ու հմայքը:

Բանաստեղծը հավաքում էր միևնույն հեքիաթի՝ տարբեր ժողովուրդների մեջ գոյություն ունեցող զանազան տարբերակները, որ նրան հնարավորություն էր տալիս ավելի խոր ըմբռնելու ժողովուրդների ապրելակերպը, կենցաղի պայմանները, դրությունը և զարգացումը:

Թումանյանը հեքիաթների սոսկական թարգմանիչ չէր: Նա համեմատում էր տվյալ հեքիաթի տարբերակները, և դրանցից ընտրում և թարգմանում էր ամենաբնորոշ տարբերակը, երբեմն մյուս տարբերակներից առանձին տարբեր մտցնելով իր ընտրածի մեջ:

Թումանյանին շատ էր հրապուրում արևելյան հեքիաթը՝ ժողովրդական երևակայության իր գունագեղ աշխարհով: Նրա գրադարանում կարելի էր գտնել

1 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, 1951, էջ 100:

արաբական, չինական, տիբեթական, հնդկական, ճապոնական հեքիաթների բազմաթիվ հրատարակություններ և տարբերակներ, ինչպես «Ճապոնական հեքիաթներ», «Հին Ճապոնիայի զրույցները», «Հին արևելքի հեքիաթներ», Պավլենկոյի հեքիաթների գրադարանը, Սիտինի նրբագեղ ու գեղեցիկ հրատարակությունը:

Ճապոնական ժողովրդական բանահյուսության գանձարանում առանձնահատուկ տեղ են գրավում հեքիաթները, որոնք աչքի են ընկնում մտահղացման նրբությամբ, լեզվի պատկերավորությամբ: Այդ հեքիաթները արտահայտում են ճապոն ժողովրդի լավատեսությունը, լավագույն, երջանիկ կյանքի երազանքները: Ճապոնական հեքիաթների հերոսը աշխատասեր է, հավատարիմ, սիրով հակված դեպի հայրենիքը և հարազատները: Այդպես է, օրինակ, «Ձրկնորս Ուրաշիմայի հեքիաթ»-ի համանուն հերոսը: Թումանյանը բարձր էր գնահատում այն ամենը, ինչ գեղեցիկ է և իմաստուն, հետևաբար նա չէր կարող անտարբերությամբ անցնել սքանչելի այդ հեքիաթի կողքով, որը հավերժական գեղեցկության ու կյանքի, հայրենիքի հանդեպ հավատարմության մի ձոներդ է, հայրենիք, որին սիրում է ժողովուրդը, և որը իր զավակներին կոչում է վերադառնալու իր գիրկը:

Թումանյանը, որ միշտ խարազանել է մարդկանց թերությունները, ընչաքաղցությունը, ժլատությունն ու անմարդկայնությունը, պատահական չէ, որ ընտրել է նաև ճապոնական մի այլ հեքիաթ՝ «Լեզուն կտրած ծիտիկը»: Հեքիաթը չի սահմանափակվում միայն մարդկանց արատները նշելով: Սրա ուժն այն է, որ նա հաստատում է «ինչ որ ցանես, էն կհնձես» ժողովրդական իմաստությունը, որը ցույց է տրված շար ու ազահ պառավի օրինակով:

Ձկնորս Ուրաշիմայի հեքիաթում Թումանյանին գրավել է երկու հանգամանք՝ երիտասարդ ձկնորսի կերպարի մարդկայնությունը (նա ազատում է ծովում բռնած կրիային, մի այլ տարբերակում՝ կրիան գնում է երեխաներից և ազատում) և հայրենիքի ու անմահության պրոբլեմը: Շատ վիպերգություններում, ավանդակներում և հեքիաթներում հերոսները որոնում են անմահության ու հավիտենական կյանքի էլեքսիրը. նրանք ամեն ինչից հրաժարվում են հանուն հայրենիքի, ծնողների նկատմամբ տաժած սիրո. պերճաշուր, անհոգ կյանքից հրաժարվելով, նախընտրում են աղքատիկ հյուղակը, և իրենց աշխատանքով են վաստակում հանապազօրյա հացը:

Թումանյանն իր գրադարանում եղած Ուրաշիմայի հեքիաթի բազմաթիվ տարբերակներից ընտրել է Սիտինի պատկերազարդ հրատարակությունը, մասամբ օգտագործելով նույն հեքիաթի Պորոգովսկայայի գերմաներենից կատարած թարգմանությունը: Թումանյանի թարգմանությամբ այդ հեքիաթը լույս է տեսել նույն ձևավորմամբ և նույն ճապոնական նկարներով: Սիտինի հրատարակած տարբերակը ամենից համառոտն է և ավելի մոտ է բնագրին, քան մյուս վարիանտները: Վերջիններս Թումանյանի ուշադրությանը չեն արժանացել, հավանաբար այն պատճառով, որ դրանք ավելի շուտ փոխադրություններ են. թարգմանիչներն իրենք հավելումներ են կատարել և յուրովի մեկնաբանել երիտասարդ ձկնորսի կերպարը: Որոշ տարբերակներում մանրամասնորեն նկարագրվում է Ուրաշիմայի տունը, փոթորիկը, որին նա հանդիպում է, մյուսներում՝ այն դեպքը, երբ Ուրաշիման կրիան գնում է երեխաներից, որոնք տանջում էին նրան, վերջապես երրորդ տարբերակում՝ Ուրաշիման ոտքերը գետին է խփում, բղավում է, իմանալով, որ իր բացակայությունից ի վեր անցել

է մի քանի դար, և մի շարք այլ մանրամասներ, որոնք ո՛չ մի նշանակություն չունեն և չեն առնչվում բարի և սիրող պատանու կերպարին:

Սակայն Հ. Թումանյանը ստրկաբար չի հետևել հեքիաթի՝ իր ընտրած տարբերակին: Թարգմանության ընթացքում նա շատ բան է ավելացրել. լեզվին հաղորդել է բարեհնչունություն, մտցրել է հնչյունային կրկնակներ, նույնանիշներ (ինչպես՝ «Մեծ ահագին կրիա»), ժողովրդական ոճեր, ստեղծել է ծերունու կերպարը, որը հերոսին պատմում է ճշմարտությունը, թե ինչ է պատահել նրա բացակայության միջոցին և այլն:

Թումանյանը բանաստեղծական գծեր է հաղորդել Սեն-Նինիի կերպարին, որի անունը, ի դեպ, նա վերցրել է Պորոզովսկայայի թարգմանությունից: Թումանյանը Սեն-Նինիին անվանում է «չխնաղ Սեն-Նինի, անճման Սեն-Նինի», շեշտում է նրա գեղեցկությունն ու թովչանքը: Նա ավելացնում է այդ սքանչելի կղզում տիրող հավերժական երջանկության, սիրո, անհոգ կյանքի վերաբերյալ այնպիսի նախադասություններ, որոնք չկան Սիտինի հրատարակության մեջ. — «Ու ապրում էին անհոգ, երջանիկ էս հրաշալի դրախտում»: Թումանյանը այսպես է վարվել, նպատակ ունենալով ընդգծել, թե այդ դրախտում չքնաղ Սեն-Նինիի հետ վարած անհոգ ու պերճաշուք կյանքում անգամ Ուրաշիման հիշում է իր դժբախտ ծնողներին և խեղճ հայրենիքը: Թումանյանը հրաժարվում է ռուսական այդ հրատարակության լեզվի համար բնորոշ՝ իրադարձությունների շոր, ճապաղ, գրասենյակային, արձանագրական ոճից:

Ռուսական թարգմանության մեջ Ուրաշիման ասում է. «Ես այստեղ շատ երջանիկ եմ, բայց և այնպես կցանկանայի վերադառնալ տուն, որպեսզի տեսնեմ հորս ու մորս, եղբայրներին ու քույրերին»: Այնինչ Թումանյանը ավելացնում է մի նախադասություն, որի մեջ պարզորոշ լսվում է բանասացի ձայնը. Ուրաշիման ասես չի ուզում վերադառնալ չքնաղ Սեն-Նինիին. նա ցանկանում է, որ Սեն-Նինին ինքը թույլ տա իրեն այցելել հայրենիք, տեսնել ծնողներին. «...Միայն հայրենի երկրի ու հարազատների կարոտը մտել էր Ուրաշիմայի սիրտը և զորանում էր օրեցօր: — Ես շատ եմ բախտավոր էստեղ, էս հրաշալի դրախտում, քեզ հետ, իմ աննման Սեն-Նինի, բայց սրտով ուզում եմ մեր տունը գնամ, տեսնեմ՝ ո՛նց են իմ անօգնական ծերացած հերն ու մերը, իմ քույրերն ու եղբայրները»: Ուրաշիման կարոտում է... Թումանյանը ընդգծում է հայրենիքի կարոտը, մի զգացմունք, որ այնքան լավ ծանոթ է իրեն և իր ժողովրդին...

Յուրաքանչյուր հեքիաթ սովորաբար ունենում է որոշակի բարոյախոսական եզրակացություն. ժողովուրդը հեքիաթը պատմում է նրա՝ համար, որ ամեն ոք որոշակի հետևություն անի, որ հեքիաթը նրան որևէ բան սովորեցնի, հուշի, թե ինչպե՛ս պետք է ապրել:

Այդ պատճառով Թումանյանը դեն է նետել Սիտինի տարբերակի վերջավորությունը, որտեղ ոչ մի հետևություն չկա, չկա որոշակի գաղափար, այլ տրվում է միայն մերկ փաստը. «Бедный Урасима! Он умер, потому что был ветрен и непослушен. Если бы он поступил, как ему советовали, то прожил бы еще тысячу лет». («Խեղճ Ուրաշիմա: Նա մեռավ, որովհետև թեթևամիտ ու անհնազանդ էր. եթե նա վարվեր այնպես, ինչպես իրեն խորհուրդ էին տալիս, ապա դարձյալ հազար տարի կապրեր»): Թումանյանը կանգ չի առել նաև վերջավորության մի այլ տարբերակի վրա (Չեչինի թարգմանությունը). «Прошло несколько мгновений, старик обратился в труп, а труп в

пыль, которую немедленно развеял ветер и смыли морские волны». («Անցավ մի քանի ակնթարթ, ծերունին անշունչ ընկավ, իսկ նրա դիակը փոշի դարձավ, որն իսկույն ցրեց քամին և սրբեցին տարան ծովի ալիքները»):

Թումանյանը դիմել է Պորոգովսկայայի թարգմանությանը և նույնիսկ գրքում մատիտով նշել վերջավորությունը, մի բան, որ նա շատ հազվադեպ էր անում: «Урашима в многочисленных рыбацких деревнях Японии почитается как местное благодетельное божество, за то, что он даже среди наслаждений жизни на вечнозеленом острове не позабыл своих бедных родителей».

(«Ճապոնիայի ձկնորսական բազմաթիվ գյուղերում Ուրաշիմային պաշտում են որպես տեղական բարերար աստվածության, այն բանի համար, որ նա մշտադալար կղզում կյանքի վայելքների մեջ անգամ չմոռացավ իր խեղճ ծնողներին»): Սակայն Թումանյանը իր հեքիաթն ավարտում է ո՛չ թե այս վերջավորության թարգմանությամբ, այլ յուրովի վերապատմելով, և մերժելով կրոնական մոմենտը:

Ուրաշիման ո՛չ թե աստվածություն է, այլ մարդ, իր ժողովրդի զավակը, որին պետք է սիրել, պետք է նմանվել: Նա մեռավ, վարվելով ըստ իր սրտի թելադրանքի. «Խեղճ Ուրաշիմա... զրկվեց ջահել, երկար կյանքից ու երջանիկ ապրելու վայելքից: Բայց նա սիրող, ազնիվ սիրտ ուներ ու գնաց իր սրտի հետևից: Էդ է պատճառը, որ մինչև օրս էլ Ճապոնիայում չեն մոռացել Ուրաշիմային ու նրա խորհրդավոր պատմությունը: Եվ շատ տեղերում պաշտում են նրան նրա՝ համար, որ նույնիսկ աստվածների անհոգ աշխարհքում, Սենսինիի սիրո մեջ էլ չմոռացավ հարազատներին և իր աղքատ ծննդավայրը:

Հեքիաթի վերջավորությունն ամփոփում է այն ստեղծող ժողովրդի հիմնական գաղափարը: Եվ Թումանյանն իր հեքիաթի վերջավորության մեջ ներհյուսել է ծնողների ու հայրենիքի սիրո գաղափարը: Մարդկայնության իմաստն այն է, եզրակացնում է Թումանյանը, որպեսզի մարդը բոլոր պայմաններում, նույնիսկ հավերժական երջանկության, սիրո և անմահության կղզում, փաթեթավորված մեջ չմոռանա իր հայրենի երկիրը, իր տունը, որքան էլ դրանք աղքատ ու խեղճ լինեն: Դրանով իսկ Թումանյանը իր թարգմանությամբ հեքիաթը դարձնում է խրատական, ուսանելի:

Հետաքրքրական է նաև ճապոնական մի այլ հեքիաթ՝ «Լեզուն կտրած ծիտիկը»: Թումանյանի գրադարանում կան այդ հեքիաթի բազմաթիվ տարբերակները: Նա ձեռքի տակ է ունեցել այդ հեքիաթի ո՛չ միայն ռուսերեն տարբեր թարգմանությունները, այլև բնագիրը՝ ճապոներեն հրատարակությունը: Բնագրի նկարներով կարելի է որոշել, թե ռուսերեն թարգմանության ո՛ր տարբերակն է համապատասխանում բնագրին: Թումանյանը ջանասիրաբար հավաքել, համեմատել է տարբերակները և եկել այն եզրակացության, որ բնագրին ամենից ավելի մոտ է Մենդրինի թարգմանությունը՝ գետեղված «Сказания древней Япо-НИИ» («Հին Ճապոնիայի զրույցները») գրքում, քանի որ բնագրի և ճապոնական հեքիաթների վերոհիշյալ ժողովածուի նկարները նույնն են: Սակայն Թումանյանն իր թարգմանության համար հիմք է ընդունել Սիտինի հրատարակությունը: Իսկ ինչո՞ւ թարգմանիչը չի ընտրել մյուս տարբերակները, նույնիսկ այն, որը համապատասխանում է ճապոնական հեքիաթի բնագրին: Բանն այն է, որ շնայած մանրամասնությունների մեջ եղած որոշ տարբերություններին, դրանք միանգամայն այլ վերջավորություն ունեն: Սիտինի տարբերակում պատ-

մրվում է, թե ինչպես ծիտիկը օսլա է կտցում շար պառավի տանը և պատժվում է, թե ինչպես նրա բարեսիրտ տերերը, վարձատրվում են իրենց մարդասիրության համար, իսկ նրանց բախտին նախանձող շար պառավին շար ոգիները պատահ-պատահ են անում:

Թումանյանը գրեթե ամբողջովին հետևել է Սիտինի տարբերակին. հեքիաթի բոլոր մնացած թարգմանությունների մեջ «հերոսները» ո՛չ թե ծերունին, պառավը ու նրանց շար հարևանուհին են, այլ բարի ծերուկը և նրա շար կինը, որ վերջիվերջո ուղղվում է: Բայց այս վերջավորությունը Թումանյանին չի գոհացրել. նախ՝ դա թարգմանչի ինքնահնարանքն է և երկրորդ՝ շար ու ագահ պառավի հանկարծակի ուղղվելու բարոյական վերափոխման մոտիվը անհամոզիչ ու մտացածին է: Հեքիաթը սովորեցնում է, որ ագահությունը, շարությունը, ժլատությունը, դաժանությունը երբեք լավ բանի չեն հանգեցնում, դրանք դատապարտվում և պատժվում են: Ժողովուրդը գիտի ներել, բայց միաժամանակ պատժում է նրանց, ովքեր անմարդկային են, ժլատ ու նախանձոտ:

Ի՞նչպես է Թումանյանը թարգմանել «Լեզուն կտրած ծիտիկը» հեքիաթը: Ամենից առաջ պետք է նշել, որ նա լիովին պահպանել է դեպքերի հաջորդականությունը. վերացրել է շորությունը, հասարակ փաստագրությունը: Թումանյանը հեքիաթի լեզուն դարձրել է ճկուն, ներդաշնակ: Ամբողջ հեքիաթի ընթացքում Թումանյանը ասես հիշում է, որ հեքիաթը բանավոր ստեղծագործություն է, այն պատմում են, ուստի և նա խոսում է կարճ, լիիմաստ, գունեղ պարբերություններով: Հեքիաթին խորթ են երկար, ստորադասական նախադասություններով ու միջանկյալ բառերով խճողված պարբերությունները: Պառավը կտրում է ծիտիկի լեզուն. ահա՛ թե այդ միտքը գեղարվեստորեն ինչպես է տրվված ռուսերեն և հայերեն թարգմանությունների մեջ:

«Когда соседка услышала, что ее любимец за свой поступок лишился языка, она сильно опечалилась и пустилась со своим мужем в путь, через поля и горы, чтобы узнать куда улетел воробей».

«Հարևանուհին լսում է, որ իր սիրելի ծիտիկի լեզուն կտրել են: Սաստիկ վշտանում է, վեր է կենում իր մարդու հետ ճամփա է բռնում, սար ու ձոր ընկնում, որ իմանա, թե ո՛ր կողմը թռավ իր ծիտիկը»:

Ռուսական տեքստում մեկ պարբերության մեջ կա չորս երկրորդական նախադասություն, մի բան, որ հատուկ չէ հեքիաթի ժանրին: Այնինչ Թումանյանը այդ նույն պարբերությունը կազմել է լակոնիկ, ցայտուն նախադասություններով, դրա հետ մեկտեղ ո՛չ մի բան բաց չթողնելով բովանդակությունից:

Թումանյանը հեքիաթը պատմում է ժողովրդական, հնչեղ լեզվով: Գրական վարպետության վառ օրինակ կարող է ծառայել թեկուզ առաջին նախադասության թարգմանությունը. «Это случилось давно»... («Վաղուց պատահած բան է...»): Թումանյանը նրբորեն հասկանալ է տալիս, թե ինքը կատարվածի մասին գիտի լսելով, քանի որ դա եղել է շատ վաղուց:

Ռուսական տեքստում նախադասությունը անհաջող կազմելու ևս մի օրինակ (շար պառավը իմանում է հարևանների հարստության մասին):

«Когда старуха, отрезавшая у воробья язык, узнала про это, то позавидовала счастью соседки и

«էս բանը լսում է ծիտիկի լեզուն կտրող շար պառավը: Նախանձում է հարևանների բախտին: Հարց ու փորձ

пришла расспросить ее, где живет воробей и обо всем остальном, что касалось дороги». է անում, թե որտեղ է կենում լեզուն կտրած ծիտիկը, տեղն ու ճամփեն սովորում է»:

Նախադասությունները ստորադասական շաղկապներով միավորելը ծանրացնում է հեքիաթի տեքստը, ձգձգում է այն, թուլացնում է ընթերցողի ուշադրությունը, շխոսելով արդեն այն մասին, որ կրկնվող «про это», «это», «то», «обо всем», «что» շաղկապներն ու կապերը ականջ են ծակում, խախտում են հեքիաթի հնչունային ներդաշնակությունը: Թումանյանը հանում է դրանք, կառուցում է կարճ, հնչեղ նախադասություններ, որոնք արտահայտում են իրադարձությունների արագասլաց ընթացքը, ընթերցողին ստիպելով անհամբերությամբ սպասել հետագա դեպքերին: «Չա՛ր պառավը»,—ընդգծում է Թումանյանը և ուսական թարգմանության՝ «что касалось дороги» («ինչ վերաբերում է ճանապարհին»), արձանագրային ոճը Թումանյանը տվել է «հարց ու փորձ է անում, տեղն ու ճամփեն սովորում» ժողովրդական դարձվածքով: «Ես էլ կերթամ ծիտիկի մոտ,—ասում է ու ճամփա ընկնում»:

Հեքիաթի մեջ հազիվ թե հարմար լինի ասել «отправилась в путь» (ուղևորվեց, մեկնեց), և այն էլ «не долго думая» («առանց երկար ու բարակ մտածելու»)։ անկասկած, ավելի արտահայտիչ է «пустилась в путь-дорогу»—այսինքն՝ «ճամփա է ընկնում»:

Չնայած ուսական ու հայկական թարգմանությունների ոճական մեծ տարբերությանը, պետք է ասել, որ Հ. Թումանյանը հեքիաթի և ոչ մի տարրը դուրս չի գցել:

Հեքիաթի մեջ ավելորդ ոչ մի բան չպետք է լինի, որ կարող է խախտել պատմության կուռ ու հնչեղ ոճը:

«Когда же накрыли на стол, то стол оказался установленным рыбой и вином до того, что на нем не оставалось больше свободного места...» «Սեղան է բաց անում. էնքան ձուկն ու գինի է լցնում, որ էլ դատարկ տեղ չի մնում»:

Բացի այն, որ ուսական տեքստում ոճական տեսակետից նախադասությունը սխալ է կազմված, ստեղծվել է հնչունային մի խառնաշփոթություն... «...когда же накрыли на стол, то стол, то, до того, что...» Թումանյանը ջնշում է այս շոր ու ցամաք փաստագրությունը: Պետք է նշել, որ «оказался» (պարզվեց, որ, բանից դուրս եկավ, որ) բառը սովորաբար գործածվում է փաստաթղթերում՝ «в результате того-то и того-то оказалось...» (...«այսինչ բանի հետևանքով պարզվեց, որ»):

Ռուսական թարգմանության մեջ կան այնպիսի բառեր, որոնց գործածության իմաստը թարգմանիչը պարզապես չի ըմբռնել, և որոնք հատուկ չեն հեքիաթի ոճին: Ուրախացած ծիտիկը «ծիգու» է պարում. այս բառը որոշակիորեն աններդաշնակություն է մտցնում հեքիաթի մեջ. դժվար է պատկերացնել, որ ծիտիկը՝ այդ փոքրիկ թռչունը, պարեր «ծիգու»—անգլիական ծագում ունեցող մի պար, որը սովորաբար պարում են նավաստիները, գոռում-գոչուկներով, ոտքերով դոփելով գետինը: Մանավանդ Ճապոնիայի համար «ծիգուն».

իհարկե, բոլորովին բնորոշ չէ²։ Թումանյանը կարողացել է ընտրել զարմանալի գեղեցիկ ու հաջող մի բառ՝ «...վեր կենում ծտապարի...»։ Կարելի է համարձակ կերպով պնդել, որ «ծտապար» Թումանյանի լեզվական դյուտերից մեկն է։ Նա միշտ կարողացել է վարպետորեն ընտրել ժողովրդական դիպուկ արտահայտություններ, դտնել օտար լեզվից թարգմանվող բառի, դարձվածքի հայերեն համարժեքը։

Վերցնենք մի այլ արտահայտություն. «...бросив в сторону свой кубок» նախադասությունը Թումանյանը թարգմանել է՝ «բաժակը մի կողմ է շարտում»։ «кубок»-ը (զավաթ) խիստ հանդիսավոր է հնչում։ Կամ՝ «когда стало смеркаться» («երբ մթնշաղր իջնում է») արտահայտությունը՝ հեքիաթին ոչ սազական, զուտ գրական ձևը Թումանյանը թարգմանում է «...իրիկունը, որ ընկնում է» («когда же пал вечер»), որ ավելի է պատշաճում հեքիաթին։

Թումանյանը հեքիաթն ազատում է գոհակաբանություններից, կոպիտ դարձվածքներից, իմանալով, որ հեքիաթը ամենից առաջ և ամենից շատ երեսխաներն են կարդում. օրինակ՝ ռուսերենում պառավը գոռում է. «Ах ты, ненавистная тварь!» գոհակ արտահայտությունը։ Այնինչ Թումանյանը թարգմանել է. «Ա՛յ, դու անպիտան արարած...» նախադասությամբ, որը միանգամայն տեղին ու պատշաճ է տվյալ դեպքում։

Թումանյանը հմտորեն գործածում է նաև տիպական ժողովրդական արտահայտություններ։ Թարգմանիչների համար սովորաբար փորձաքար են լեզվի ժողովրդական-բանաստեղծական դարձվածքները, որոնք պետք է գործածել, թե՛ առանց ստրկաբար հետևելու բնագրի լեզվին և թե՛ առանց «վերապաճուճավորման»։ Վերցնենք, օրինակ, բաժնի բառի գործածության այդպիսի մի դեպք. ծերունիները ստացել են զամբյուղը և տանը բացում են այն.

«Ничего подобного они не ждали...».

«էն տեսակ մի բան, որ իրենց օրում իսկի մտքներովն էլ չեն անցկացրել»։

Բաժնի բառը դարձվածքին տալիս է իմաստային երանգ, իսկ ամբողջ նախադասությունը խորհրդանշում է անսովորն ու զարմանալին։

Հեքիաթների արտահայտչական միջոցներից են նկարագրական կրկնակ բառերը, ինչպես, օրինակ, ո՛չ թե «Воробей улетел», այլ՝ «Միտիկը թռչում է, գնում», կամ՝ «...пустилась со своим мужем в путь...», «վեր է կենում իր մարդու հետ ճամփա է բռնում»։

Թումանյանը մեծ վարպետությամբ հաղորդում է պատմողի ձայնը, մերժելով անտարբեր չոր ու ցամաք պատմելու ձևը։ Ծերունիները ծիտիկից ստանում են զամբյուղը.

«Откроем и посмотрим, что в ней,— сказали они. Старики открыли корзину и нашли в ней золото и серебро, драгоценные камни и свертки шелка».

«Բեր մի բաց անենք, տեսնենք ի՞նչ կա մեջը։ Բաց են անում—ի՛նչ են տեսնում. է՛լ ոսկի, է՛լ արծաթ, է՛լ անգին քար, է՛լ թուփերով մետաքսեղեն...»։

² Ճապոնական բնագրում այդ բառի մասին ոչ մի խոսք չկա։ Ըստ երևույթին, այն ավելացրել է թարգմանիչը։

Պահպանված է հեքիաթի լեզվի անմիջականությունը, որ տարբերվում է մյուս ժանրերի երկերի լեզվից:

Թումանյանը պահպանում է հեքիաթի համար բնորոշ աղբյուսական հարգալից արտահայտչական ձևը՝ հաճախ պայմանական եղանակով: Համեմատենք երկու թարգմանությունները:

«Старики отвечали» — Թումանյանը թարգմանում է՝ «հյուրերը, թե...», կամ՝ «...заговорили о том, что им пора уходить» — «խոսք են բաց անում, թե իրենց տուն գնալու ժամանակն է»:

Երբեմն այնտեղ, որտեղ ըստ բովանդակության պետք է տրվեն իրադրության լարվածությունը, գործողության ակնթարթայնությունը, ուսական տարբերակում հանդիպում ենք սովորական պատմողական լեզվի: Ահա օրինակ, պառավը օսլան դնում է տաշտը, բայց.

«...ручной воробей-баловень, при- «Հարևանի ձեռնասովոր ծիտը գր-
надлежавший ее соседке, склевал նում է՝ օսլան կտցահարում: Պառավը
крахмал. Сердитая старуха заме- վրա է հասնում»:
тила это, схватила воробья...»:

Գործողությունը դանդաղեցնող դարձվածքները մեր մեծ բանաստեղծը փոխարինել է առավել արտահայտիչ նախադասություններով, որոնք առանց ավելորդ դատողությունների հաղորդում են եղելությունը: Այն, որ «պառավը վրա է հասնում», արդեն ասում է, որ պառավը նկատել է ծիտիկին, իսկ որ նա բարկացկոտ է, մենք այդ գիտենք հեքիաթի սկզբից:

Հեքիաթի ուսական թարգմանության լեզուն խիստ չոր ու ցամաք է: Հեքիաթի հետ չեն առնչվում այնպիսի արտահայտություններ, ինչպես «она громко кричала» («նա ուժգին գոռում էր»): այս նախադասությունը գործածված է «նա կանչում էր ծիտիկին» իմաստով: Թումանյանը թարգմանել է այսպես. «Մարդ ու կնիկ գնում են ու ձեն տալիս»: Հայկական թարգմանությունը այնքան բանաստեղծական, գեղեցիկ ու արտահայտիչ է, որ ասես լսում ես նրանց ձայնի արձագանքը: Կամ վերցնենք մի այլ օրինակ. ծերունին և պառավը հյուր են գնում ծիտիկի մոտ, իսկ նա «...распорядился об угощении»: Վերջին դարձվածքը Թումանյանը տալիս է՝ «պատիվ է անում» ժողովրդական արտահայտիչ ոճով, մերժելով «распорядился» (տնօրինեց, կարգադրեց) գրասենյակային բառը:

Թե Թումանյանը որքան կենդանի, պատկերավոր և արտահայտիչ կերպով է տալիս հիմնականը, բաց թողնելով այն ամենը, ինչ ավելորդ է և պահպանելով էականը, պարզորոշ երևում է նաև հետևյալ նախադասության թարգմանությունից: Ծերունիները զամբյուղը բերում են տուն և բաց են անում.

«...и чем больше драгоценно- «Քանի հանում են, էնքան ավելի
стей они вынимали, тем больше ос- շատ է մնում մեջը»:
тавалось в ней»:

Այս հակիրճ նախադասությամբ է տալիս Թումանյանը վերահիշյալ միտքը: Մի այլ օրինակ. «запасу не было конца»... («պաշարը վերջ չունենք»): Ինչ պաշարի մասին է խոսքը: Թումանյանը թարգմանում է՝ «անվերջ, անհատնում», և այդ երկու բառը հիանալի ցույց են տալիս, որ հարստությունները այնքան շատ էին, որ դրանց վերջը չէր երևում:

Թումանյանը տեքստում ավելացնում է այնպիսի բառեր, որոնք, պատմածին տալիս են էմոցիոնալ վառ երանգներ՝ «ձեզ համար», «ոտի վրա», «ուրախ անց են կացնում»: Ավելացնում է հայկական իդիոմատիկ արտահայտություններ, ինչպես ցույց են տալիս ստորև բերված պարբերության ընդգծված բառերը.

«Воробей обрадовался, когда «Ծիտիկը, որ տեսնում է՝ իր հին увидел, что его старый господин с տերն ու տիրուհին իրեն տես են եկել, госпожой пришли навестить его». աշխարհով մին է լինում»:

էմոցիոնալ առումով որքան հագեցած է «աշխարհքով մին է լինում» արտահայտությունը, այսինքն՝ ոչ թե սոսկ «ուրախացավ», այլ ցնծաց այնքան, որ ասես ամբողջ աշխարհը իրեն տված լինեին:

Թումանյանը նրբորեն տեսնում է, որ հարկադրանքի տարրը հարմար չէ տվյալ իրադրությանը: Ծերունիներին հյուրասիրում են:

«Прислуживать за столом воро- «Կինը, որդիքն ու թոռներն էլ ոտի бей заставил свою жену со всеми վրա ծառայում են»:

Ռուսերեն թարգմանության մեջ լավ չի հնչում заставил (ստիպեց, հարկադրեց) բառը. չէ՛ որ նրանք այդ բանն անում են երախտագիտության անկեղծ զգացմունքից և ծերունիներին հաճելի լինելու ցանկությունից զրդված, որոնցից ծիտիկը միայն բարի վերաբերմունք էր տեսել:

Հետաքրքրական է, որ Թումանյանը, հետևելով հեքիաթի սյուժեին, միանգամայն այլ կերպ է հասկացել ու հաղորդել ինտոնացիոն արտահայտությունը. երբ ծիտիկը ծերունիներին առաջարկում է ընտրել զամբյուղներից մեկը, նրանք ասում են.

«Мы стары: давай нам лучше «Մենք պառավ մարդիկ ենք. բեր легкую корзину,— ее будет легче մեզ թեթեւ տուր, ավելի լավ է՝ հեշտ нести...»:

Ոչ թե «давай нам» (տուր մեզ), այլ «բեր մեզ թեթեւ տուր, ավելի լավ է, հեշտ կտանենք» հարգալիր ձևով է Թումանյանը արտահայտում ծերունիների պատասխանը:

Այնտեղ, որտեղ Թումանյանը գտնում է, որ լրիվ պատկերացում ստեղծելու համար անհրաժեշտ է ավելացնել որևէ բառ, նա ընտրում է ամենահարմար բառը: Պետք էր շեշտել պառավի ազահությունը, որ մեծ զամբյուղն է ընտրել. Սիտինի տարբերակում նա «бросилась домой» («վազեց տուն»): Նախ այդպիսի ծանր բեռով նա հազիվ թե կարողանար «վազել տուն»... Թումանյանը գրում է՝ «տնքալով տանում է»:

Հեքիաթը պետք է հետաքրքրություն առաջացնի, լարված պահի լսողին: Այս բանը միանգամայն հաջողվել է Թումանյանին:

Վերցնենք ևս մի պարբերություն երկու թարգմանություններից.

«Придя домой, старуха открыла «Տանում է տուն: Տանում է, ազահ- корзину, но едва она успела это ազահ բաց է անում: Բաց է անում, сделать, как из корзины вдруг с թե չէ՝ աղմուկով դուրս են թափվում

шумом вылетело целое стадо чертей гадких-прегадких, которые мгновенно растерзали старуху на части...».

այլանդակ, անճոռնի շար ոգիները, տեղն ու տեղը խեղդում շար պառագիծն»:

Երեք երկրորդական նախադասություն՝ դերբայական դարձվածքով, շահաված այն, որ «սատանաների հոտ» չի կարող լինել (լինում է միայն ոչ-խարների հոտ): Այս միտքը, որ ռուսական թարգմանության մեջ արտահայտված է բարդ ստորադասական նախադասությամբ, Թումանյանը տվել է կարճ նախադասություններով, պատմելով այնպես, որ ասես բսլոներով նկարում է, հետզհետե բացահայտելով գործողությունը, ընդ որում, մեկ նախադասության վերջը դառնում է հաջորդի սկիզբը:

Այսպես ուրեմն, հիմք ընդունելով այս ամենը, կարող ենք ասել, որ Թումանյանը, նախ՝ պահպանել է իրադարձությունների հաջորդականությունը և դրա հետ մեկտեղ, որսացել է այն, ինչ չի հասկացել Սիտինի հրատարակության թարգմանիչը, այն է՝ հեքիաթի ոգին: Պատմողականության ներդաշնակությունը, դրամատիզմի տարրերի խտացումը ո՛չ թե նկարագրական, այլ աշխույժ, կենդանի շարադրանք՝ ահա՛ ինչպիսին է հեքիաթը Թումանյանի թարգմանությամբ: Հեքիաթը, որ Սիտինի տարբերակում կորցրել է իր հնչեղությունը, հայկական թարգմանության մեջ վերագտել է բուն հեքիաթի հատկանիշները, նրբորեն բացահայտված բարոյախոսությամբ, բանասացի կենդանի խոսքի հաղորդմամբ:

Այսպիսով, մի այլ, հեռավոր ժողովրդի ստեղծագործությունը վարպետությամբ հայերենի փոխադրելով, Թումանյանը կատարել է գլխավոր այն խնդիրը, որ ծառացած է գրականության ու բանահյուսության թարգմանիչների առջև, այն է՝ վերացնել ժողովուրդներին բաժանող ժամանակի և տարածության պատնեշները, փոխադարձաբար հարստացնել միմյանց, դնել ժողովուրդների բարեկամության, փոխադարձ հարգանքի ամուր հիմքերը: